## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 16. Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը

Պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| | | |
|---|---|---|
| ~~17.~~ | ~~ավտոմեքենայի պետական համարանիշ տալու համար~~ | ~~բազային տուրքի 12-պատիկի չափով~~ |
| ~~17.1.~~ | ~~մոտոփոխադրամիջոցների, կցորդների և կիսակցորդների հաշվառման համարանիշ տալու համար~~ | ~~բազային տուրքի վեցապատիկի չափով~~ |

| | |
|---|---|
| *«17. ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ եւ ժամանակավոր համարանիշի) հատկացնելու համար* | *բազային տուրքի տասներկուապատիկի չափով* |
| *17.1. մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման համարանիշ հատկացնելու համար* | *բազային տուրքի վեցապատիկի չափով».* |

| | | |
|---|---|---|
| ~~25.~~ | ~~դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների պետական համարանիշներ տալու համար~~ | ~~բազային տուրքի 25-պատիկի չափով~~ |
| ~~26.~~ | ~~ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար~~ | ~~բազային տուրքի վեցապատիկի չափով~~ |

| | |
|---|---|
| *«25. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին եւ միջազգային կազմակերպություններին տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր հատկացնելու համար* | *բազային տուրքի քսանհինգապատիկի չափով* |
| *26. ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման վկայագիր տալու համար* | *բազային տուրքի վեցապատիկի չափով»:* |

Հոդված 20. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

| | | |
|---|---|---|
| ~~1.~~ | ~~վարորդական իրավունքի վկայական տալու համար~~ | ~~բազային տուրքի 12-պատիկի չափով~~ |

| | |
|---|---|
| *«1. վարորդական վկայական տալու (վարորդական վկայականը փոխանակելու, կորած վարորդական վկայականի փոխարեն նորը տալու) համար* | *բազային տուրքի տասներկուապատիկի չափով»:* |

Հոդված 31.

Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնությունների սահմանումը

Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել`

ա) Հայաստանի Հանրապետության ~~Նախագահը~~ *վարչապետը*`սույն օրենքի 14 հոդվածի 8-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում.